12830

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«07» 09 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0158-23

Ձեռնարկողը՝ ***«Թրիպլ Մայնինգ» ՍՊԸ***
Ք. Երևան, Խաղաղ Դոնի 356, շ.5

Գործունեությունը՝ ***Ռանչպարի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0158-23

«07» սեպտեմբերի 2023թ.

Արարատի մարզի Ռանչպարի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Թրիպլ Մայնինգ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտ (Գ կատեգորիա)
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Ռանչպար բնակավայր

Նախնական գնահատման հայտով /այսուհետ՝ հայտ/ նախատեսվում է Արարատի մարզի Ռանչպարի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի տարածքում 2023-2024թթ. իրականացնել ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ՝ շինարարական խճի և ավազի, ինչպես նաև ճանապարհաշինարարական պաստառահումքի արդյունահանման նպատակով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք, ՀՕ-110-Ն/ 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 2-րդ կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն հայտի Ռանչպարի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Հարավ-արևմտյան տեղամասը գտնվում է Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Ռանչպար բնակավայրի վարչական տարածքում՝ կենտրոնից 0.9կմ հարավ-արևելք, Մասիս քաղաքից 7.2կմ հարավ-արևմուտք, զբաղեցնում է մոտ 14.82հա մակերես 918-926 մ բացարձակ բարձրությունների վրա, Սև ջուր գետի ձախ ափին: Գյուղի բնակելի շինությունների և հայցվող տարածքի միջև նվազագույն հեռավորությունը կազմում է 175-200մ, Հ-12 հանրապետական նշանակության ավտոճանապարհն անցնում է տեղամասից մոտ 1150մ հեռավորության վրա, մոտ 700մ հյուսիս-արևելք գտնվում են գյուղարտադրական օբյեկտների տարածքներ:

Մասիս-Երևան ավտոմայրուղու հետ տեղամասը կապված է գրունտային (3.0կմ) և ասֆալտապատ (12կմ) ճանապարհներով:

Տեղամասի շրջանը գտնվում է մերձարաքսյան իջվածքում, որը ռեգիոնալ երկրաբանական տեսակետից միջլեռնային տեկտոնական իջվածք է հերցինյան

ծալքավորված հիմքի վրա և ծածկված է միջին էոցենի մինչև 1100մ հզորությամբ կավերով, տուֆաավազաքարերով, տուֆալևրոլիտներով, տուֆաարգիլիտներով և օլիգոցենի հասակի մոլասային խայտաբղետ շերտախմբով, որի հզորութունը շուրջ 600-700մ է:

Տեղամասի օգտակար հաստվածքը ծագումնաբանորեն կապված է Արարատյան հարթավայրի Սև ջուր գետի արտաբերման և ափամերձ վերին չորրորդականի ալյուվիալ-դելյուվիալ նստվածքների հետ ու դասվում է գետաողողատային տիպին և ունի պարզ երկրաբանական կառուցվածք:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են բացառապես Սև ջուր գետի ստորին վերհունային դարավանդի վերին չորրորդականի նստվածքային առաջացումները և ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները ավազակուտակի տեսքով, որի հիմքում տեղադրված են ստորին չորրորդականի նստվածքային առաջացումները՝ ներկայացված կավերով, ավազակավերով և կավավազներով:

Շրջանը ներառված է չոր ցամաքային կլիմայական գոտում, ցուրտ ձմեռով և շոգ ամառով (ամռանը մինչև +40°C, իսկ ձմռանը՝ -10°C):

Շրջանի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է +6°C-ից +12°C: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 300մմ:

Ըստ նախնական հայտի երևակման տարածքում սողանքային երևույթներ չեն արձանագրվել:

Ռանչպարի ԱԿԽ հանքավայրի Հարավ-արևմտյան տեղամասի տարածքում խոշոր ջրագրական միավորները Արաքս և Սև ջուր (Մեծամոր) գետերն են: Սև ջուր գետը գտնվում է հայցվող տեղամասը արևմուտքի և հարավ-արևմուտքի եզրագծում, Արաքս գետի հունը անցնում է շուրջ 730մ հեռավորության վրա:

Համաձայն հայտի բուն հայցվող տարածքում հողաբուսական շերտը բացակայում է: Ավազակուտակի մակերևութային հատվածը ներկայացված է 0.15-0.25մ հզորությամբ (միջինը 0.17մ) ավազակավերով, որոնք համատարած ծածկում են ավազակոպիճներին:

Համաձայն հայտի երկրաբանական հետախուզման բուն տարածքում բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, վտանգված էկոհամակարգեր, պատմամշակութային հուշարձաններ, անտառային տարածքներ չկան: Հայցվող տարածքին ամենամոտ գտնվողը բնության հուշարձանը «Դաշտաքար» քարանձավն է, հեռավորությունը կազմում է մոտ 35կմ: «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, «Գոռավանի ավազուտներ» և «Խոր Վիրապ» պետական արգելավայրերը գտնվում են հայցվող տարածքից 20-35կմ հեռավորությունների վրա:

Հայցվող տարածքի հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական և այլ գործառնական նշանակության հողեր են:

Ըստ հայտի «Թրիպլ Մայնինգ» ՍՊ ընկերությունը Ռանչպարի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագիրը կազմել է հաշվի առնելով տեղամասի երկրաբանական կառուցվածքը, գեոմորֆոլոգիական ձևը, տարածքի չափերը, դրանց երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները:

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել Սև ջուր գետի ափամերձ 14.82հա մակերեսով, որը սահմանափակվում է հետևյալ կոորդինատներով (ARM WGS-84 համակարգով)՝

1.	4431571.6200, 8446553.6500	19.	4431741.6500, 8447071.1300
2.	4431785.3100, 8446454.1200	20.	4431736.5000, 8447082.5800
3.	4431847.6300, 8446447.2700	21.	4431734.9300, 8447097.3900
4.	4431850.1100, 8446454.3400	22.	4431752.4100, 8447128.3600
5.	4431841.4700, 8446480.1000	23.	4431756.0000, 8447146.3100
6.	4431925.9400, 8446577.8000	24.	4431753.7600, 8447158.8800
7.	4431935.0300, 8446775.4100	25.	4431744.7900, 8447168.0800
8.	4431836.7000, 8446849.6400	26.	4431737.3300, 8447165.8800
9.	4431821.1200, 8446854.6600	27.	4431656.3100, 8447065.5100
10.	4431811.6600, 8446869.5400	28.	4431657.3000, 8447052.6500
11.	4431801.7500, 8446895.3800	29.	4431672.9800, 8447020.5200
12.	4431803.2700, 8446924.4700	30.	4431682.7400, 8446935.4100
13.	4431809.6100, 8446945.9500	31.	4431676.0900, 8446889.8600
14.	4431777.6000, 8446994.5600	32.	4431589.4500, 8446761.0900
15.	4431770.1100, 8447015.5700	33.	4431576.6100, 8446731.6600
16.	4431753.0600, 8447037.9500	34.	4431556.3900, 8446644.0400
17.	4431738.0600, 8447052.0600	35.	4431558.6100, 8446594.2100
18.	4431736.8100, 8447063.2000	1.	4431571.6200, 8446553.6500

Համաձայն հայտի տեղամասի 1:2000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ 14.82հա տարածքի վրա, բոլոր հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Նկատի ունենալով տեղամասի պարզ երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մորֆոլոգիական ձևը և չափսերը, ինչպես նաև երկրաբանահետախուզական աշխատանքների համար ընտրված տարածքի չափսերը, հետախուզումը նախատեսնվում է իրականացնել մինչև 7.0մ խորությամբ 13 հետախուզահորերով, մինչև 5մ խորության 5 հետախուզառուներով, նմուշարկման զուգորդությամբ: Տեղամասի զգալի մասը ճահճակալված է և մինչև դաշտային աշխատանքների սկսելը փորվելու են փոքր առուներ, որոնց օգնությամբ տեղամասի լճակների ջուրը թափվելու է Սև ջուր գետ:

Օգտակար հանածոյի գրանուլոմետրական կազմի և ֆիզիկամեխանիկական հատկությունների, քիմիական և միներոլոգիական ուսումնասիրությունների նպատակով նախատեսնվում է հետախուզափորվածքներից վերցնել 18 ակոսային նմուշ: Հաշվի առնելով հետախուզափորվածքների միջև հեռավորությունները,որոնք տատանվում են 77.0-295մ սահմաններում, հնարավոր է հետախուզված պաշարները գնահատել արդյունաբերական C_1 կարգով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նպատակն է պարզել օգտակար հանածոյի պիտանելիությունը, որակական հատկանիշները և համապատասխանությունը, որպես ճանապարհաշինարարական պաստառահումքի արտադրության հումք «Ավազ շինարարական և աշխատանքների համար» 8736-2014 ՀՍՏ ԳՈՍՏ-ի և «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներիվ շինարարական աշխատանքների համար» 8267-95 ԳՈՍՏ-ի պահանջների:

Նախատեսվում է անցնել 7.0մ խորության 13 հետախուզահոր: Հետախուզահորերի զբաղեցրած ընդհանուր մակերեսը (յուրաքանչյուր հորի կազմում է՝ 3մ x 2մ=6մ^2, 6մ^2 x 13 = 78մ^2:

Հետախուզահորերի ծավալը կկազմի՝ 13x7.0մ = 91.0 գծ.մ կամ 546.0մ³, այդ թվում ալյուվիալ-դելյուվիալ նստվածքներ՝ 13.26մ³:

Հետախուզահորերը նախատեսվում է անցնել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով IV կարգի ամրության ապարներում:

Նախատեսվում է անցնել 5.0մ խորության 5 հետախուզաառու: Առուների լայնությունը նախատեսվում է ընդունել 0.8մ, իսկ երկարությունները կազմում են.

- հետախուզաառու 1- 546.12մ,
- հետախուզաառու 2- 325.94մ,
- հետախուզաառու 3- 171.13մ,
- հետախուզաառու 4- 129.51մ,
- հետախուզաառու 5- 391.35մ,

ընդհանուրը- 1564.05 գծ.մ, 1278.54մ² կամ 6256.14մ³:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը և հետախուզաառուները: Երկրաբանական փաստագրման աշխատանքներ նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալներն են.

Հետախուզահորեր – 91.0գծ.մ,

Հետախուզաառուներ – 1564.05գծ.մ Ընդամենը՝ 1655.05գծ.մ:

Դաշտային պայմաններում ավազների բնական խտության (բնամասում), ծավալալիրքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշման համար հետախուզահորերի և հետախուզառուների անցմանը զուգընթաց նախատեսվում է դաշտային պայմաններում որոշել կուտակի ծավալային և ծավալալիրքային զանգվածների, ինչպես նաև փխրեցման գործակիցը: Աշխատանքները կիրականացվեն հայտնի ծավալից հանված նյութի կշռման եղանակով:

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է տեղամասում անցած հետախուզափորվածքների 6802.14մ³ ծավալից 60մ³-ը օգտագործել կուտակի դաշտային պայմաններում բնական խտության (բնամասում), ծավալալիրքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշման համար:

ԱԿԽ կուտակի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է հորատանցքերը և հետախուզահորերը ենթարկել նմուշարկման: Նախատեսվում է վերցնել 18 նմուշ:

Նմուշարկումը կիրականացվի ակոսային եղանակով՝ օգտակար հանածոյին ուղղահայաց և ամբողջ հզորությամբ: Նմուշների չափսերն ընդունվում են՝ հատույթը 10x10սմ կամ 2.0x0.1x0.05մ³: Յուրաքանչյուր նմուշի կշիռը բազմափուլ կրճատումից հետո նախատեսվում է հասցնել 15կգ-ի: Այս նմուշները լցվելու են առանձին պարկերի մեջ և համարակալելուց հետո կուղարկվելու են լաբորատորիա:

Հետախուզվող տարածքում ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ ջրաբեր հորիզոնների և գեոդինամիկ երևույթների առկայությունը պարզաբանելու համար: Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել՝ տեղամասի ապարների կազմը, ապարների կառուցվածքային առանձնահատկությունները, անիզոտրոպիան, պարզաբանել տեղանքի գեոդինամիկ պրոցեսները: Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել, հետազոտել հիմնական ջրատար հորիզոնները, եթե այդպիսիք կան, բնութագրել և

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ 02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

նկարագրել դրանք, ուսումնասիրել ջրի որակը, կատարել ռեժիմային դիտարկումներ: Դիտարկումները նախատեսվում է կատարել ամիսը մեկ անգամ:

Աշխատանքների ավարտից հետո, դաշտային պայմաններում ավազների բնական խտության (բնամասում), ծավալալիրքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշումից և նմուշարկման աշխատանքներից հետո նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ առաջացած և նմուշարկումից հետո մնացած 6801.96մ³ (0.180մ³ -ը նմուշների ծավալն է) ծավալով ԱԿԽ կուտակի հետլցնում, իսկ առանձին կուտակված 8.64մ³ ալյուվիալ-դելյուվիալ նստվածքները և հողաբուսական շերտը օգտագործել ռեկուլտիվացիայի համար, ինչի նպատակով նախատեսված՝ 339135դրամ: Աշխատանքները կատարվելու են ձեռքով, առանց լրացուցիչ ծախսերի:

Համաձայն ժամանակացույցի աշխատանքների կատարման ժամկետները սահմանված են՝ 2023թ. 3-րդ եռամսյակից մինչև 2024թ. 4-րդ եռամսյակը:

Համաձայն հայտի ճանապարհների կառուցում չի նախատեսվում, քանի որ տեղանքում գոյություն ունեն դաշտամիջյան գրունտային բարվոք ճանապարհներ: Եթե աշխատանքների իրականացման ժամանակ գործող ճանապարհների որոշ հատվածներ քանդվեն, ընկերությունը կկատարի մասնակի վերանորոգում, առանց լրացուցիչ ծախսերի:

Գործունեության իրականացման ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տեխնիկական նպատակներով անհրաժեշտ ջուրը վերցվելու է Ռանչպար գյուղում գտնվող խորքային հորից, որի շահագործման համար ընկերությունը 06.02.2023թ.-ին ստացել է №0029 ջրօգտագործման ույլտվություն: Նույն հորից բավարարվելու է կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջուրը: Խմելու ջուրը գնվելու է Ռանչպար բնակավայրի առևտրի կետերից շշալցված տարբերակով և աշխատանքները սպասարկող ավտոմեքենայով տեղափոխվելու է աշխատանքների վայր:

Համաձայն հայտի ուսումնասիրության ընթացքում տարածքում առաջանալու են երեք տեսակի թափոն՝ մակաբացման կավավազային ապարներ՝ հետախուզահորերի տարածքից 13.26մ³ և հետախուզաառուների տարածքից 217.35մ³, նավթամթերքների և քսայուղերի մնացորդներ 40լ քանակությամբ և իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ մոտ 45լ քանակությամբ և կենցաղային թափոններ: նավթամթերքների և քսայուղերի, ինչպես նաև կենցաղային թափոնները տեղափոխվելու են ընկերության կողմից համապատասխան պայմանագրերի հիման վրա:

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում վերցված բոլոր նմուշների լաբորատոր հետազոտություններն իրականացվելու են հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Համաձայն նախնական հայտի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու օդային ավազանի, հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, բուսական և կենդանական աշխարհի, լանդշաֆտային ամբողջականության պահպանման հետ: Դաշտային աշխատանքների կարճատև լինելու հանգամանքով պայմանավորված՝ մեխանիզմների շահագործումից առաջացած վնասակար ծխագազերի, հորատման ընթացքում առաջացող արտանետումները և աղմուկի մակարդակը չեն գերազանցելու սահմանային թույլատրելի նորմերը: Բուսական և կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունները լինելու են աննշան, քանի որ աշխատանքները կատարվելու են բուսական ծածկույթից զուրկ տարածքում, կենդանիների և թռչունների բնադրավայրերից հեռու:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ENVIRONMENTAL IMPACT
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ:

Նախատեսվում է իրականացնել՝

- Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերում՝ համապատասխան ծառայություն մատուցող կայաններում:
- Աշխատանքների ժամանակ կիրառվող սարքավորումների և մեքենաների վրա արտաթորվող թունավոր նյութերի ֆիլտրերի տեղադրում:
- Փոշենստեցման նպատակով տեղամասին մոտեցնող ճանապարհի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով՝ պայմանագրային հիմունքերով:
- Կենցաղային աղբի համաքում հատուկ անթափանց տարողություններում, 50լ տարողությամբ պոլիէթիլենային պարկերում, աղբահանության պայմանագրի կնքում:
- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:
- Գործունեության և հարակից տարածքում ընկերության կողմից կատարվելու է մոնիթորինգ /կենսաբազմազանության դիտարկում, տարեկան մեկ անգամ/, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով:
- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:
- Աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն:
- Սև ջուր գետի ջրերի որակի մշտադիտարկում, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ և այլն:

ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի թիվ 64-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով նախատեսված է, որ ջրային աղբոտման, աղտոտման, տղմակալման և հյուծման կանխարգելման նպատակով պետք է սահմանվի ջրապահպան գոտիներ: Այս պահանջը հայցվող տարածքում բավարարված է, երևակման փորվածքների տեղադրումը գտնվում է Սև ջուր գետից նվազագույնը 20մ հեռավորության վրա:

Մշտադիտարկումների կատարման համար տարեկան նախատեսվում է հատկացնել 480.0հազ.դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է տարածաշրջանում շինարարական նյութերի պահանջարկի բավարարման նպատակով: Երկրաբանահետախուզական աշխատանքների (դաշտային աշխատանքներ) կատարման ժամանակահատվածը լինելու է կարճատև և սեզոնային: Ուստի ուսումնասիրության ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր և տեղային: Հայտում ներառված են աղմուկի մակարդակի, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման,

թափոնների կառավարման, խախտված տարածքների ռեկուլտիվացիայի և մոնիթորինգի իրականացման բավարար միջոցառումներ:

Փորձաքննության ընթացքում հայտը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով Արարատի մարզի Մասիս համայնքի Ռանչպար բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Արարատի մարզպետարանը:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
- Երևակման փորվածքների տեղադրումն իրականացնել՝ պահպանելով հայտով ամրագրված Սև ջուր գետից նվազագույն 20մ հեռավորությունը, բացառելով գետի հունի խախտումը:
- Ապահովել խախտված տարածքների ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին:
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Թրիպլ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Ռանչպարի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Արմինե Վարդանյան